



Co-funded by
the European Union



"AGATE"
RIGHTS DEFENSE CENTER
FOR WOMEN WITH DISABILITIES



ՀԱՅԱՍՏԱՆԱՆՅԱՆ ՔՅԿ-ՆԵՐԻ ԴԵՐԸ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՄԵԴԻԱԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ



ՁԳՏՈՒՄ ԱՎԵԼԻ ԼՍՎ ԱՊՍԳԱՅԻ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՍԿԱՆ
ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԻՄԱԿԱՑՈՒՆԻԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒ

«STRIVE» ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից: Այն իրականացնում է Նեֆ Բելգիան (NEF Belgium)՝ համագործակցությամբ չորս գործընկեր կազմակերպությունների: «Ագաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն ՅԿ, «ԲԼԵՋԱՆ» բնապահպանական, սոցիալական, բիզնեսի աջակցության ՅԿ, «ՎԻՆՆԵԹ Գորիս» զարգացման հիմնադրամ և «Դիլիջանի երիտասարդների համագործակցության կենտրոն» ՅԿ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Սույն հետազոտությունն իրականացվել է **մեդիափորձագետ Գարեգին Խումարյանի** կողմից «ԶԳՏՈՒՄ ավելի լավ ապագայի. համայնքների և քաղաքացիական հասարակության դիմակայունությունն Հայաստանում» («STRIVE») ծրագրի շրջանակներում Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Նիրո Իսթ Ֆաունդեյշնի հայաստանյան մասնաճյուղը», և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

«STRIVE» ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից: Այն իրականացնում է ՆԵՖ Բելգիան (NEF Belgium)՝ համագործակցությամբ չորս գործընկեր կազմակերպությունների. «Ագաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն ՀԿ, «ԲԼԵՋԱՆ» բնապահպանական, սոցիալական, բիզնեսի աջակցության ՀԿ, «ՎԻՆՆԵԹ Գորիս» զարգացման հիմնադրամ և «Դիլիջանի երիտասարդների համագործակցության կենտրոն» ՀԿ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Հետազոտության նախադրյալներ
- Հետազոտության օբյեկտ
- Հետազոտության խնդիրներ
- Հետազոտության նպատակներ
- Մեթոդաբանություն
- Հանրության մեդիագրագիտության մակարդակի բարձրացման հարցում քաղհասարակության ներգրավվածության աստիճանը
- Մեդիագրագիտության ներկա մակարդակը Հայաստանում
- ԶԶԿ սեկտորի ներդրումը և հանրության մեդիագրագիտության առկա ցուցանիշը
- Պատմական ակնարկի փոխարեն
- Հանրության մեդիագրագիտության բարձրացմանն ուղղված ծրագրերի ծածկույթը
- Մեդիագրագիտության «Էկոհամակարգ»
- Արդյունավետություն
- Սեղմագիր
- Ամփոփում. Խնդիրների հասցեագրում
- Միջոցների աղբյուրների դիվերսիֆիկացիա
- Ներառականություն և կամավորություն
- Օրենսդրություն և կարգավորումներ
- 2021-2024 թվականներին մեդիագրագիտության խնդիրներով զբաղված ԶԶԿ-ների ցանկ
- 2021-2024 թվականներին իրականացված մեդիագրագիտությանն առնչվող ծրագրերի ցանկ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐ

21-րդ դարի առաջին քառորդը հաճախ բնորոշվում է իբրև հետճշմարտության դարաշրջան: Նախորդ դարի վերջում ամերիկացի դրամատուրգ, հրապարակախոս Սթիվ Տեսիչի կողմից շրջանառության մեջ դրված եզրույթը ենթադրում է զանգվածային հաղորդակցության մասնակիցների այնպիսի փոխազդեցություն, որի պայմաններում անհատի աշխարհայացքի, հանրային կարծիքի և, որպես հետևանք, նաև հանրային վարքաբանության ձևավորման վրա առաջնային է դառնում հուզականությունն ու սուբյեկտիվ համոզմունքը, իսկ օբյեկտիվ փաստերի ազդեցությունը դառնում է երկրորդական:

Նկարագրված պայմաններում տեղեկատվության սպառումը վերածվում է սեփական աշխարհայացքի ճշմարտացիությունն ապացուցող ազդակների և շեշտադրումների փնտրտուքի, ինչն իր հերթին սահմանափակում է գաղափարների, տեսակետների առողջ շրջանառությունը: Հետճշմարտության դարաշրջանի խնդիրը ոչ այդքան ֆեյքնյուզի, մանիպուլյացիայի առկայությունն է, որքան այն, որ մանիպուլյացիան այլևս չի դիտարկվում որպես սպառնալիք, այլ ընդհակառակը՝ ինտենսիվորեն և կամավորաբար սպառվում է զանգվածային լսարանի կողմից, եթե տեղավորվում է լսարանի դավանած նարատիվների տրամաբանության մեջ:

Սովորական պայմաններում նկարագրված երևույթը անհնարին է դարձնում կառուցողական հանրային երկխոսությունը, խթանում անհանդուրժողականությունն ու ծայրահեղականությունը՝ քաղաքական պոպուլիզմը պահանջված և մրցունակ դարձնելով, արգելակում է հասարակությունների զարգացման ընթացքը: Իսկ ճգնաժամային պայմաններում՝ տարերային աղետներ, պատերազմներ, համաճարակներ և այլն, բերում է ուղղակիորեն կործանարար և չափելի հետևանքների:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ

Հետազոտության օբյեկտը հասարակության մեդիակոմպետենտության բարձրացման հարցում Հայաստանյան քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համախառն ներուժն է:

ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ

2021-2024

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Առաջնային խնդիր. Զարտեգագրել մեդիագրագիտության ոլորտում գործող կազմակերպությունները, հանրային նախաձեռնություններն ու ծրագրերը: Գնահատել

ապատեղեկատվության, մանիպուլյացիայի և ինֆոգեն այլ սպառնալիքների դեմ պայքարում ԶՅԿ-ների ներգրավվածության աստիճանը և բնույթը: Գույքագրել առկա խնդիրները, չիրացված ներուժի առանձնահատկությունները:

Աձևացյալ խնդիր. Գնահատել տեղեկատվական արդի իրողությունների համատեքստում ԶՅԿ-ների աշխատանքի հանրահռչակմանը խոչընդոտող գործոնները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ

Ստացված տվյալների և եզրակացությունների հիման վրա առաջարկել գործնական քայլեր հանրության մեդիագրագիտության աստիճանի բարձրացման, ապատեղեկատվության և մանիպուլյացիայի դեմ պայքարում Հայաստանյան ԶՅԿ-ների ներուժը լիարժեքորեն իրացնելու ուղղությամբ:

Հետազոտության արդյունքների հիման վրա մշակել առաջարկությունների փաթեթ տեղեկատվական ոլորտը կարգավորող մարմինների, քաղաքականություն մշակողների և այլ շահագրգիռ դերակատարների համար:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության դաշտային բաղադրիչն իրականացվել է փորձագիտական հարցման (expert survey) եղանակով՝ ներառելով քաղհասարակության համապատասխան դերակատարներին: Վերլուծական բաղադրիչն իրականացվել է դաշտային բաղադրիչի շրջանակում ձեռք բերված տվյալների և բաց աղբյուրներում առկա տեղեկությունների վերլուծության ու համադրման միջոցով: Մենք գրեթե միշտ սպառում ենք այն տեղեկատվությունը, որը տեղավորվում է մեր աշխարհայացքի մեջ: Ավելին՝ տեղեկատվություն սպառելիս մենք միշտ կենտրոնանում ենք այն բաների վրա, որոնք ապացուցում են մեր պատկերացումների ճշմարտացիությունը:

ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՄԵԴԻԱԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ ԔԱՂՅԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ

Ներկայում Հայաստանում գրանցված է շուրջ 6500 հասարակական կազմակերպություն, Այն մասին, թե քանիսն են այդ կազմակերպություններից իսկապես գոծող, արժանահավատ տվյալներ չկան: Ըստ ընդունված գնահատականի՝ ակտիվ է գրանցված կառույցների շուրջ մեկ երրորդը, և Հայաստանի հասարակական սեկտորն ընդհանուր առմամբ ամփոփում է շուրջ 2500 հաստատություն՝ ներառյալ, համատիրություններն ու արհեստակցական միությունները:

2021-2024 թվականներին հանրության մեդիագրագիտության բարձրացման խնդրով այս կամ այն չափով զբաղվել է այդ հաստատություններից 31-ը՝ հասարակական սեկտորի 1,32%-ը:

Հայաստանյան հասարակությունը մոլորակի հասարակությունների մեծամասնության պես հետինդուստրիալ տեղեկատվական հասարակություն է, որի կենսագործունեությունը բնութագրվում է տեղեկատվական գործընթացների բարձր ինտենսիվությամբ և այդ գործընթացներում հասարակության անդամների ճնշող մեծամասնության ներգրավվածությամբ, երբ տեղեկատվության շրջանառությանը մասնակցելը՝ տեղեկատվություն սպառելը, տարածելը, ստեղծելը, վերաթողարկելը այլևս վարքաբանական նորմ է, ուստի և տեղեկատվության շրջանառության որակը և բնույթը մեծապես պայմանավորում են հասարակական գործընթացների որակը և, որպես այդպիսին, հասարակության զարգացման ընթացքը:

Այսինքն հանրության մեդիակոմպետենստության աստիճանը՝ որպես տեղեկատվությունը վերլուծելուն, գնահատելուն, տարածելուն և ստեղծելուն ուղղված հմտությունների և գիտելիքների ամբողջություն, հանրության համախառն արդյունավետության կարևոր գործոններից է և վերաբերելի է հասարակության անխտիր բոլոր անդամներին, Ընդորում, ըստ խնդրով զբաղվող մասնագետների, հայաստանյան հասարակության մեդիագրագիտության ներկայիս մակարդակը ավելի քան երկու անգամ ցածր է ցանկալից (հետազոտությունը պարունակում է հանրության մեդիագրագիտության աստիճանի ընկալման ինդեքսի հաշվարկյ Առավել մանրամասն՝ համապատասխան բաժնում):

Խնդիրն առավել պատկերավոր է դառնում, երբ այն հետևյալ կերպ ենք ձևակերպում:

Գոյություն ունի հանրության 100%-ին վերաբերելի պարամետր, որը ցանկալի աստիճանից ցածր է ավելի քան 2 անգամ, և որի բարձրացմանը այս կամ այն չափով մասնակցում է հանրության ինքնակազմակերպված ներուժի 1,32%-ը:

Հաջորդիվ ներկայացվող փաստերը, տվյալներն ու եզրակացությունները առավել ամբողջականորեն ընկալելու համար պետք է դիտարկվեն նկարագրված անհամաչափության լույսի ներքո:

ՄԵԴԻԱԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱ ՄԱԿԱՐԴԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հանրության մեդիագրագիտության աստիճանի բարձրացման հարցում ԶՀԿ-ների կամ այլ ղեկավարների ներդրումը գնահատել պատրաստվող հետազոտողը միանգամից հիմնարար խնդրի է բախվելու: Հայաստանում երբեք չի իրականացվել հանրության մեդիագրագիտության աստիճանը ճշգրտորեն չափող հետազոտություն: Այսինքն գոյություն չունի զրոյական կետ, որի վրա պիտի կառուցվի հետազոտությունը: Ուստի որոշակի առումով այս ուսումնասիրության շրջանակներում էլ անհնար էր լիարժեքորեն խուսափել ակադեմիական գիտության չափորոշիչներին չհամապատասխանող մոտեցումներից և գործիքակազմից:

Այսպիսի տվյալների բացակայության պայմաններում առաջնորդվելու ենք մեդիափորձագետների շրջանում մեդիագրագիտության աստիճանի ընկալման ինդեքսով, որը դուրս է բերվել Էքսպերտային հարցումների ընթացքում:

Հետազոտությանը մասնակցած մասնագետներին առաջարկվել է պատասխանել հետևյալ հարցին. «1-10 բալային սանդղակով (ինտուիտիվ) գնահատեք խնդրեմ հայաստանյան հասարակության մեդիագրագիտության աստիճանը»:

Ստացված պատասխանների թվաքանական միջինը 3,8-ն է, որը հետայսու կօգտագործենք իբրև էլքային տվյալ:

ԶՀԿ ՍԵԿՏՈՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՄԵԴԻԱԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՌԿԱ ՑՈՒՑԱՆԻՇԸ

Փորձենք գնահատել հայաստանյան հասարակական սեկտորի ներդրումը հանրության մեդիագրագիտության առկա ցուցանիշի ձևավորման մեջ, ինչի համար անհրաժեշտ է գնահատել.

ա) ԶՀԿ-ների կողմից իրականացված համապատասխան ծրագրերում ներգրավված շահառուների շրջանակի համախառն ծավալը և թիրախային խմբերը,

բ) իրականացված ծրագրերի բնույթը:

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿԻ ՓՈԽԱՐԵՆ

Մի փոքր դուրս գալով հետազոտության ժամանակագրության սահմաններից (2021-2024)` նշենք, որ «մեդիագրագիտություն» եզրույթի առաջին հրապարակային կիրառումները հայկական միջավայրում վերաբերում են 2010-2011 թվականներին: Կիրառման կոնտեքստը վերականգնելն անհնար է, որովհետև

օրիգինալ էջերը բացակայում են, և եզրույթի կիրառման հետքերը մնացել են որոնողական համակարգերի «քեշ»-երում միան:

2012 թվականին է պատկանում մեդիագրագիտությանը, մեդիակրթությանը վերաբերող առաջին լիարժեք ծրագրի մեկնարկը: Այն իրականացրել է «Մեդիա Նախաձեռնությունների Կենտրոն» հ/կ-ն (ՄՆԿ), որի մասնագետները շուրջ երկու տարի աշխատել են մեդիագրագիտության դպրոցական ծրագիր մշակելու վրայ: Բարձր դասարանների համար նախատեսված «Մեդիագրագիտություն» դասընթացի մեջ մտնում էր «Մեդիագրագիտություն» ձեռնարկը՝ էլեկտրոնային հավելվածով և խաղով: 2013-ին ձեռնարկը երաշխավորվել էր ՀՀ ԿԳ նախարարության կողմից՝ որպես ուսումնասովանական կյուրս դպրոցների համար: Ծրագրի շրջանակներում շուրջ 100 ուսուցիչներ ստացել էին համապատասխան վերապատրաստում:

Ընդհանուր առմամբ նկարագրված ծրագրից է սկսվել ոչ միայն ԶՀԿ դաշտի մասնակցությունը հանրության մեդիագրագիտության բարձրացման խնդրին, այլ որպես այդպիսին մեդիագրագիտության հետ կապված բոլոր գործընթացները:

Մեդիագրագիտությանը վերաբերող ամենահին և մինչ օրս գործող ցանցային պրոդուկտը 2012 թվականի փետրվարին գրանցված «Մեդիագրագիտություն» ֆեյսբուքյան խումբն է, որտեղ լրատվական դաշտի ներկայացուցիչները քննարկում են մասնագիտական հարցեր, Խումբը, թեև կենտրոնացած է մանկաույցացիայի, ապատեղեկատվության և անբարեխիղճ լրագրության դեմ պայքարի վրա, ոչ այդքան բուն մեդիագրագիտության խնդիրներին է նվիրված, որքան լրատվական դաշտի ներհամայնքային հարցերին:

Մեդիագրագիտությանը վերաբերող և զանգվածային լսարանին ուղղված առաջին լիարժեք էլույթ-բանախոսությունը տեղի է ունեցել 2013 թվականին Բուն գիտամշակութային հիմնադրամի ծրագրերի շրջանակում: Բանախոսը՝ Մանասա Ասլամազյան (Ինտերնյուս/ՄՆԿ):


Ընդհանուր առմամբ մեդիագրագիտության թեմատիկան մեր երկրում սկսել է մշակվել 2010-ականների սկզբից՝ հենց ԶՀԿ սեկտորի նախաձեռնությամբ: Եվ այս ուսումնասիրության մեջ, որը վերաբերում է 2021-2024 թվականներին, մենք հաշվի ենք առնում նաև նախորդ 10 տարիների փորձը:

ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՄԵԴԻԱԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ԾԱԾԿՈՒՅԹԸ

2021-2024 թվականներին ԶՀԿ-ների կողմից իրականացվել է մեդիագրագիտության ոլորտին առնչվող 31 ծրագիր (նշված ծրագրերի մի մասը սկսվել է ուսումնասիրվող ժամանակաշրջանից առաջ, բայց ընթացել է ուսումնասիրության առարկա ժամանակահատվածում: Ծրագրերի մի մասը շարունակվում է հետազոտության անցկացման պահին): Ծրագրերի բովանդակային բաշխվածությունը հետևյալն է.

- Կրթական՝ մեդիագրագիտության հետ կապված հմտությունների ուսուցանում - 43,7%,
- Գեղարվեստաստեղծագործական՝ ձեռնարկների, տեսալսողական և մուլտիմեդիա արտադրանքի ստեղծում և տարածում - 35,9%,
- Պայքար ապատեղեկատվության դեմ փաստերի ստուգման հարթակներ և ծառայություններ - 12,8%,
- Մեդիայի ստանդարտների բարձրացում (ինքնակարգավորում և էթիկա) - 5,1%,
- Պետական մարմիններում խնդրի ադվոկացիա - 2,5%

Բովանդակային բաշխվածություն



Ուսումնասիրվող ժամանակաշրջանում նշված ծրագրերին ընդհանուր առմամբ ուղղակիորեն մասնակցել է շուրջ 2000 մարդ: Եթե բացառենք միևնույն շահառուների մասնակցությունը տարբեր ծրագրերի, նշված ժամանակահատվածում ամեն տարի մեդիագրագիտության հետ կապված ծրագրերի մասնակիցների թիվը պետք է որ 700-ը չգերազանցի:


Այս գնահատականը չի ներառում փաստերի ստուգման հարթակների և մեդիագրագիտության բարձրացմանն ուղղված մեդիապրոդյուկտների սպառումը:

Ընթացիկ ժամանակահատվածում 2012 թվականի համեմատ մեդիագրագիտությանը վերաբերող ծրագրերում ուղղակիորեն ներգրավված շահառուների թիվը տասնապատկվել է: Եթե ենթադրենք, որ աճը եղել է անշեղ և գծային, ինչը մոտ է իրականությանը, ապա վերջին 12 տարիներին մեդիագրագիտության, մեդիակոմպետենտության, մեդիակրթության թեմատիկային հաջողվել է ուղղակիորեն հաղորդակից դարձնել շուրջ 5000 մարդու:

Բովանդակային առումով գրեթե բոլոր ծրագրերում շեշտադրված են նաև երկրորդային էֆեկտները, ուստի անտղղակի շահառուների թիվը և ընդհանուր առմամբ իրականացված ծրագրերի ազդեցությունը զգալիորեն ավելի բարձր է (օրինակ՝ աշակերտները, ում դասավանդել են վերապատրաստված ուսուցիչները, կամ ուսանողները, որ ուսանել են ծրագրերի շրջանակներում մշակված ձեռնարկներով և այլ):

ԸՅԿ-ների կողմից իրականացված մեդիագրագիտությանը վերաբերող ծրագրերի երկրորդային ծածկույթը գնահատելու համար անհրաժեշտ է դիտարկել այդ ծրագրերի թիրախավորումը: Նշված ժամանակահատվածում իրականացված ծրագրերի թիրախային խմբերի բաշխվածությունն ըստ զբաղվածության ունի հետևյալ պատկերը:

Թիրախային խմբերն՝ ըստ զբաղվածության



1. *ԸՅԿ- ներկայացուցիչներ-14.8%*
2. *ՉԼՄ-մասնագետներ-11.1%*
3. *Պետական և ՏԻՄ մարմինների աշխատակիցներ – 11,1%*
4. *Դասավանդողներ (դպրոցներ/նախակրթարաններ) – 7.4%*
5. *Աշակերտներ – 7.4%*
6. *Մասնավոր սեկտորի ներկայացուցիչներ - 5,5 %*
7. *Ուսանողներ – 3,7%*
8. *Նախակրթարանների սաներ – 1,9%*
9. *Առանց (ըստ զբաղվածության) թիրախավորման 37,1%*

Շահառուների 1-ին, 4-րդ և մասամբ 2-րդ խմբերը՝ ԸՅԿ-ներկայացուցիչները, դասավանդողները և ՉԼՄ մասնագետները, որոնց համախառն կշիռը 33,3% է, իրենց մասնագիտության և սոցիալական դերի


առանձնահատկություններից ելնելով, ապահովում են ծրագրերի երկրորդային ծածկույթ և շեշտակիորեն ընդլայնում են մեդիագրագիտության թեմատիկային հաղորդակից մարդկանց շրջանակը:

Շահառուների 3-րդ խմբի՝ պետական և տեղեկան ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների հետ աշխատանքը առավել ոյուրին է դարձնում մեդիակրթության, հանրության մեդիակոմպետենտության բարձրացման խնդիրներին ուղղված աղվակացիան, որի շնորհիվ, օրինակ, մեդիակրթության տարրերը հաջողվել է ներմուծել հանրակրթական ծրագրեր, կամ պարտադրել կառավարությանն ընդունել ԶՅԿ ներկայացուցիչների կողմից մշակված Ապատեղեկատվության դեմ պայքարի ազգային ռազմավարությունը:

Կարևոր է նաև աշատանքը շահառուների 2-րդ խմբի՝ ՉԼՄ ներկայացուցիչների հետ, ինչը բարենպաստ ազդեցություն է ունենում ընդհանուր տեղեկատվական ֆոնի վրա, ինչն ըստ էության նույնիսկ ոչ երկրորդային, այլ երրորդային էֆֆեկտ լինելով արդյունքներից ամենազանգվածայինն է:

Իրականացված ծրագրերի թիրախային խմբերի բաշխվածությունն ըստ տարիքի ունի հետևյալ պատկերը:

- Երիտասարդներ - 15,3%
- Երեխաներ/դեռահասներ – 15,3%
- Մեծահասակներ - 5,1%
- Առանց տարիքային թիրախավորման - 64,3%



Իրականացված ծրագրերի շուրջ 30%-ը այս կամ այն չափով վերաբերվել է 33 մարզերի բնակչությանը:

Մեդիագրագիտության «Էկոհամակարգ»

Մեդիագրագիտության բարձրացման խնդրի շուրջ ձևավորված Էկոհամակարգը կարելի է հետևյալ կերպ պատկերել.

Համակարգի միջուկը, կամ առաջին օղակը մեդիագրագիտության թեմատիկայով այս կամ այն չափով զբաղվող 31 ԶՀԿ-ներում ներգրավված շուրջ 100-մասնագետներն են, որոնք այդ կազմակերպությունների ընդհանուր մարդկային ներուժի շուրջ 43%-ն են:

Անձնակազմի ներգրավվածության տեսանկյունից պատկերը համասեռ չէ: Մեդիագրագիտությանը վերաբերող ծրագրերում ներգրավված աշխատակիցների մասնաբաժինը տատանվում է 10-80% միջակայքում: Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ չկա այդպիսի կազմակերպություն, որը զբաղվի միայն և միայն մեդիագրագիտության խնդիրներով: Ամենացածր ցուցանիշը հայտարարագրում է «Արմավիրի Չարգացման Կենտրոն» ՀԿ-ն, ամենաբարձրը՝ «Հանուն հավասար իրավունքների» ՀԿ-ն, որի ներկայացուցչի խոսքերով մեդիագրագիտության թեմատիկայով այս կամ այն չափով զբաղվում են իրենց կազմակերպության բոլոր աշխատակիցները, բացի վարչական հատվածից:

Ըստ ստացված տվյալների՝ մեդիագրագիտության խնդիրներին է ուղղված այդ կազմակերպություններում տարվա կտրվածքով ծախսվող ընդհանուր աշխատաժամանակի 31, և տիրապետած համախառն բյուջեի շուրջ 37%-ը:

Նշված ժամանակահատվածում տարվա կտրվածքով նշված ԶՀԿ-ների կողմից մեդիագրագիտությանն ուղղված ծրագրերի վրա համախառն ծախսը շուրջ 800 հազար ԱՄՆ դոլար է:

Չնչին բացառություններով ծրագրերի ֆինանսավորումն արտաքին է: Խոշորագույն դոնորներն են ԱՄՆՍԶԳ-ն, ԵՄ-ն, «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամը:

Երկրորդ օղակում ԶՀԿ-ների իրականացրած ծրագրերին ուղղակիորեն մասնակցած շուրջ 5000 շահառուներն են:

Երրորդ օղակն ամփոփում է այն մարդկանց, ովքեր գիտելիք, հմտություն ու լայն իմաստով մշակույթ են ստացել և յուրացրել նախորդ խմբի հինգ հազարից և ունակ են դա փոխանցելու շրջապատին: Այս շրջանակի մարդկանց թիվն ամենալավատեսական գնահատականով չափտի գերազանցի 30-40 հազարը:

Անշուշտ իրենց սպառած տեղեկատվության նկատմամբ քննադատական վերաբերմունք ցուցաբերելու ունակ մարդկանց թիվը շեշտակիորեն ավելի մեծ է: Տվյալ դեպքում խոսքը քննադատական մտածողությունը մեդիագրագիտության լույսի ներքո ընկալող մարդկանց մասին է (ի վերջո, կարելի է լինել ըստ էության մեդիագրագետ, բայց երբեք լսած չլինել «մեդիագրագիտություն» եզրույթը):

Ստացված պատկերը համադրենք մեդիագրագիտության աստիճանի ընկալման ինդեքսի հետ, որն ինչպես նշել էինք նախորդիվ, 10-ից 3,8 է:

Արդյունավետություն

Իրենց աշխատանքի արդյունավետությունը գնահատելիս՝ «Մեդիագրագիտության Էկոհամակարգի» ԹՀԿ-ներից յուրաքանչյուրն առաջնորդվում է կատարողականի սեփական ցուցանիշներով, որոնք մեծ մասամբ անհամադրելի են: Ուստի ԹՀԿ-ների՝ ջանքերի արդյունավետության վերաբերյալ իրենց իսկ ընդհանուր ընկալումը պատկերացնելու համար էքսպերտային հարցումների մասնակիցներին առաջարկվել է պատասխանել հետևյալ հարցերին.

- «1-10 բալային սանդղակով գնահատեք խնդրեմ ձեր կազմակերպության արդյունավետությունը»:
- «1-10 բալային սանդղակով գնահատեք խնդրեմ ոլորտի այլ կազմակերպությունների և առհասարակ համայնքի ջանքերի արդյունավետությունը»:


Առաջին հարցի միջին պատասխանը՝ **6.4**

Երկրորդինը՝ **4.9**

Չատկանշական է, որ հարցվածների ճնշող մեծամասնությունն իրենց ներկայացրած կառույցի արդյունավետությունն ավելի բարձր են գնահատել, քան համայնքի համախառն ջանքի արդյունավետությունը:

Ինչ վերաբերում է ԹՀԿ-ների արդյունավետությունն արգելակող գործոններին, հետազոտության մասնակիցների պատասխանները հետևյալ կերպ են բաշխվել.

Արդյունավետությանը խոչընդոտող գործոններ



Անբավարար ֆինանսավորում – 40% (հիմնականում ոչ այդքան ֆինանսավորման ծավալների, որքան երկարատև ֆինանսավորման իմաստով):

Ինչպես արդեն նշեցինք մեդիագրագիտության հետ կապված ծրագրերի ճնշող մեծամասնությունն ունի արտաքին ֆինանսավորում, որի պլանավորմանը ԶԶԿ-ների մեծամասնությունը մասնակցություն չունի: Դրամաշնորհային ծրագրերի բովանդակային օրակարգը ձևավորվում է հաճախ անհասկանալի, հայկական օրակարգերի հետ ուղղակիորեն կապ չունեցող գործոնների ազդեցության ներքո: Օրինակ՝ փաստերի ստուգման և ապատեղեկատվության դեմ պայքարի համար միջազգային դոնորների կողմից հատկացվող ֆինանսավորումը շեշտակիորեն սկսել է աճել 2014-15թթ.՝ պայմանավորված Ռուս-Ուկրաինական հակամարտության ֆոնին ռուսական կողմի տեղեկատվական-հոգեբանական օպերացիաների հետևանքները չեզոքացնելու հրամայականի ներքո: Հայկական դերակատարները միշտ չէ, որ հստակորեն են կողմորոշվում դոնոր կազմակերպությունների գերակայությունների փոփոխություններում և դժվարությամբ են կարողանում պլանավորել իրենց հետագա աշխատանքը, կառավարել ռեսուրսները:

ԶԶԿ-ների միջև ներքին մրցակցություն և փոխգործակցության անբավարար աստիճան - 15 %

Ի հեճուկս դաշտի խաղացողների ողջամիտ ինքնակազմակերպմանն ուղղված ջանքերի (ԶԶԿ կոնսորցիումների և փոխգործակցության այլ հարթակների ձևավորում)՝ հաճախ փոխգործակցությունը զուգորդվում է մրցակցությամբ: Հիմնական պատճառը կրկին ոլորտի ֆինանսավորման

առանձնահատկություններն են, երբ հայկական հասարակական կազմակերպությունները միցում են օտարերկրյա ֆինանսավորման համար:

Ուսումնասիրության ընթացքում մենք չենք հանդիպել մեդիագրագիտությանն առնչվող ծրագրի, որն իրականացվել անդամավճարների կամ հանգանակության հաշվին: «Էկոհամակարգի» մեծագույն խնդիրը, թերևս արտաքին դրամաշնորհներին այլընտրանք գտնելն է, ինչը մեծ դժվարությամբ է ստացվում: Ուսումնասիրվող ժամանակահատվածում միայն երեք ծրագիր է իրականացվել ոչ դրամաշնորհային միջոցների հաշվին՝ Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտի արտադրած հեռուստահաղորդումների շարքը՝ Հանրային հեռուստաընկերության պատվերով և ֆինանսավորմամբ, նույն հաստատության կողմից արտադրված անիմացիոն կարճ հոլովակների շարքը՝ «Մետա» կորպորացիայի պատվերով և Սիվիլնեթի փաստերի ստուգման հարթակի աշխատանքի մասնակի ֆինանսավորումը կրկին «Մետայի» կողմից:

Ներառականության անբավարար աստիճան. նոր դերակատարների բացակայություն - 15 %

Ստացվել է այնպես, որ մեդիագրագիտության թեմայով զբաղվող ԶՀԿ-ների ճնշող մեծամասնությունը այս կամ այն կերպ լրագրողական համայնքն են ներկայացնում: Լրագրողական կառույցների մասնակցությունը հանրության մեդիագրագիտության բարձրացման խնդիրներին բնական է, սակայն այլ ոլորտները ներկայացնող ԶՀԿ-ներն այս հարցում նույնպես վստահորեն ասելիք պիտի ունենային: Հատկապես զարմանալի է ուսուցչական, տեղեկատվական տեխնոլոգիաների և ռազմամարզական համայնքների պասիվությունը:

Մեդիագրագիտությունը որքան մեդիային է վերաբերում, ակնհայտորեն նույնքան և կրթական միջավայրին: Այս առումով հատկանշական են Մեդիա Նախաձեռնությունների Կենտրոնի և Ինտերնյուսի ջանքերն ուղղված ուսուցիչների ցանց ձևավորելուն և այն ֆինանսասահայթաթյաման հմտություններով օժտելուն:

Տեղեկատվության շրջանառությունը տեղի է ունենում ՏՏ համայնքի տիրույթին պատկանող միջավայրում: Տեխնոլոգիական համայնքն իր հերթին, թերևս, ամենամեծն ու ինստիտուցիոնալացվածն է և տիրապետում է շեշտակիորեն ավելի մեծ ռեսուրսների:

Ինչ վերաբերում է ռազմամարզական ոլորտը ներկայացնող կազմակերպություններին, ապա տեղեկատվական միջավայրը արդի պատերազմի չորրորդ հարթությունն է՝ ի լրումն օդի, ջրի և ցամաքի: Եվ հանրության մեդիակոմպետենտության ներկայիս մակարդակը մեզ խոցելի է դարձնում հատկապես պատերազմական իրավիճակում՝ Էականորեն թուլացնելով երկրի դիմադրողականությունը:

Փոքր-ինչ առաջ ընկնելով նշենք, որ հանրության մեդիագրագիտության աստիճանի բարձրացմանը խոչընդոտող օբյեկտիվ գործոնների մեջ, ըստ էքսպերտային հարցումների մասնակիցների, արտաքին

հիբրիդային ներագրումը զբաղեցնում է չորրորդ հորիզոնականը - 14,4%: Ուստի առնվազն այդ չափով խնդիրը նաև ռազմամարզական հասարակական կազմակերպությունների տիրույթում պետք է լիներ:

ԵԿՄ-ն և ԴՕՍԱՖ-ը երկրի խոշորագույն հասարակական կազմակերպություններից են և տիրապետում են ահռելի կյուբատեխնիկական ռեսուրսների: Ոլորտում գործում են նաև մի քանի տասնյակ ավելի կոմպակտ և դինամիկ կազմակերպություններ՝ ինչպիսիք են ՈՍԱ-ն, Ազատագները, Մեծն Տիգրանը, Մարտական եղբայրությունը և այլն, որոնց մեդիագրագիտության հետ կապված գործընթացներում ներգրավելը շեշտակիորեն կբարձրացներ ջանքերի արդյունավետությունը:

Թյուրքմենում հանրության լայն շերտերի կողմից – 15% (խոսքն այն մասին է, որ ԶՅԿ-ները հաճախ ընկալվում են որպես արտաքին ազդեցության գործիքներ):

Մեդիագրագիտության խնդիրներով զբաղվող ԶՅԿ-ները հանրության լայն շերտերի կողմից հաճախ իսկապես ընկալվում են իբրև արտաքին փափուկ ուժի պրոյեկտման գործիքներ: Սա հիմնականում ռուսաստանյան քարոզչական թեզ է, որը պարարտ հող է գտել հայկական միջավայրում: Խնդիրն առավել սուր է զգացվում երկրի մարզերում, որտեղ, ըստ հարցմանը մասնակցած մասնագետների, կա կոշտ հակազդեցություն տեղական ֆորմալ և ոչ ֆորմալ առաջնորդների կողմից, և հարցման մասնակիցներից մեկի ձևակերպմամբ ԶՅԿ ներկայացուցիչները հաճախ ենթարկվում են «ստիգմատիզացիայի»: Պետք է արձանագրել, որ ԶՅԿ-ների ներկայացուցիչները մեդիայի մասնագետներ լինելով, այնուամենայնիվ նախատիվների այս պատերազմում տանուլ են տվել, և խնդիրն արագ լուծում չունի:

Պետական մարմինների հետ համագործակցության անբավարար աստիճան – 10 %


Թեև, ինչպես նշվեց, մեդիագրագիտությանն առնչվող ծրագրերի թիրախային բաշխվածության մեջ ուսումնասիրվող ժամանակահատվածում պետական և ՏԻՄ մարմինները 11,1% են կազմում, ԶՅԿ-ների ներկայացուցիչները պետության հետ համագործակցության առկա մակարդակը համարում են անբավարար և խնդրահարույց: Ըստ ամենայնի՝ պետական համակարգի իներտությունը լիարժեքորեն հաղթահարելու համար պետք է շեշտակիորեն ակտիվացնել ազվոկացիայի ուղղությունը, որն, ինչպես արդեն նշեցինք, մեդիագրագիտությանն ուղղված ծրագրերում ներկայում 2,5% է զբաղեցնում:

Խնդրով զբաղվող մասնագետների կրթության, փորձառության անբավարար մակարդակ - 5%

Այս կետը, թերևս, ամենահուսադրողն է, որովհետև վկայում է մեդիագրագիտության խնդիրներով զբաղվող մասնագետների ինքնաքննադատական մոտեցման և համայնքի մասնագիտական աճին ուղղված ջանքերը պատրաստակամորեն ընդունելու հակվածության մասին:

Չանրության մեդիագրագիտության աստիճանի բարձրացման հարցում ներգրավված ԶՅԿ-ների արդյունավետությունն արգելակող օբյեկտիվ (միջավայրային) գործոններ:

Ուսումնասիրության շրջանակում անցկացված էքսպերտային հարցումների մասնակիցներին առաջարկվել էր առանձնացնել այն գործոնները, որոնք խոչընդոտում են հանրության մեդիագրագիտության աստիճանի բարձրացմանը: Պատասխանները բաշխվել են հետևյալ համամասնությամբ:



Մեդիադաշտի ինտերեսներ – 21,4% (Լրատվամիջոցների անորակ աշխատանք՝ պայմանավորված տնտեսական գործոններով, կարգավորման բացերով և ինքնակարգավորման մշակույթի թուլությամբ):

Սոցիալական ցանցերի, շարժական հավելվածների և նոր մեդիայի այլ գործիքների զարգացման ու տարածման ֆոնին տեղեկատվական գործընթացների բնույթն ու որակը շարունակում են մեծապես պայմանավորել ավանդական լրատվամիջոցները, որոնց աշխատանքը միշտ չէ, որ բարենպաստ ազդեցություն է թողնում հանրային գիտակցության վրա: Հայկական մեդիայի աշխատանքի որակը, ուղիղ համեմատական է երկրի սոցիալ-տնտեսական ցուցանիշներին: Այլ կերպ ասած, երկրի տնտեսությունը, առկա ռեսուրսները, շուկայի ծավալները չեն կարող հանրությանն այլ որակի մեդիա-միջավայր առաջարկել:

Ներքաղաքական ներկա իրավիճակ – 19% (ապատեղեկատվությունն ու մանիպուլյացիան գիտակցաբար կիրառվում են քաղաքական դերակատարների կողմից)

Ուսումնասիրվող ժամանակահատվածը պայմանավորվում է հետպատերազմյան ծայրահեղ բևեռացմամբ, քաղաքական պայքարի կոշտացմամբ և քաղաքական դերակատարների միջև նարրատիվների բացահայտ պատերազմով: Քաղաքական գործընթացի բոլոր կողմերը ձևավորել են քարոզչական ենթակառուցվածներ, և մանիպուլյացիան ու ապատեղեկատվությունն այլևս քաղաքական

պայքարի կոնվենցիոնալ գործիքներ են: Քաղաքական գործընթացների տեղեկատվական ուղեկցման մեջ ներդրող միջոցները անհամադրելի են ապատեղեկատվության ու մանիպուլյացիայի դեմ պայքարի ու հանրության մեղիագրագիտության մակարդակի բարձրացման մեջ ներդրվող միջոցների հետ: Ուստի քաղաքական դաշտից եկող դեստրուկտիվ ազդեցությունը չեզոքացնելը գրեթե անհնար է:

Հանրության կրթության ցածր մակարդակ – 16,7%

Ինչպես նշում են հարցմանը մասնակցած գրեթե բոլոր մասնագետները, մեղիագրագիտությունը առանձին գիտություն կամ առարկա չէ, և դրա աստիճանը մեծապես պայմանավորված է ընդհանուր սոցիալ-հումանիտար կրթության և տեխնոլոգիական գրագիտության մակարդակով: Ուստի հանրության մեղիակոմպետենտության անբավարար մակարդակի հիմքում նախ և առաջ բազային կրթության որակի ու համարժեքության խնդիրն է: Եվ լայն իմաստով մեղիագրագիտության հետ կապված խնդիրները կրթական համակարգի թուլության դրսևորումներից են:

Արտաքին հիբրիդային ներագդում – 14,4%

Ուսումնասիրվող ժամանակահատվածում հայաստանյան հասարակությունը տեղեկատվական-հոգեբանական կոշտ արտաքին ներագդման թիրախում է: Խոսքը Թուրքիայի, Ադրբեջանի և Ռուսաստանի մասնագիտացված կառույցների գործողությունների մասին է, որ իրականացվում են ի լրումն Հայաստանի վրա բանեցվող ռազմաքաղաքական, ռազմադիվանագիտական ճնշման: Խնդիրը հայաստանյան հասարակության դիմակայունության ռեսուրսները մաշեցնելն է, իսկ ռազմավարական հարթության մեջ՝ հանրային ճարտարագիտության գործիքներով հայկական քաղաքական ինքնությունը որոշակի խմբագրումների ենթարկելը:

Մենթալիտետի առանձնահատկություններ – 11,9%

Թեև ուսումնասիրության մասնակիցներից շատերը խնդիրը հենց այդ կերպ են ձևակերպել, խոսքը հայաստանյան հասարակությանը և հանրային գիտակցությանը բնորոշ, պատմականորեն ձևավորված որոշակի առանձնահատկությունների մասին է, որոնք մեզ արևմտյան հասարակությունների հետ համեմատած փոքր-ինչ ավելի խոցելի են դարձնում դավադրապաշտական տեսությունների և մանիպուլյատիվ պատումների առաջ, ինչն առավել սուր է դրսևորվում հետպատերազմյան հուզական ֆոնի համատեքստում:

Քննադատական մտածողության ցածր մակարդակ – 11,9%

Այս խնդիրը բնորոշ է գրեթե բոլոր հանրություններին և Հայաստանն այստեղ բնավ բացառություն չէ: Աշխարհում առայժմ չկա գործուն մեթոդաբանություն, որը թույլ կտար զանգվածայնորեն բարելավել իրականությունը քննադատաբար ընկալելու մարդկանց ունակությունը:

Բարձր տարիքի օգտատերերի ակտիվացում – 4,7%

Այս խնդիրն էլ միայն հայաստանյան չէ: Ավագ սերնդի ներկայացուցիչները, որ դաստիարակվել և ապրել են տեղեկատվական միանգամայն այլ իրականության մեջ, արդի գործիքները սպառում և օգտագործում են տեղեկատվական միջավայրի զարգացման նախորդ փուլերին բնորոշ պատտերմների տրամաբանությամբ, ինչն իսկապես միշտ չէ, որ դրական ազդեցություն է ունենում ընդհանուր տեղեկատվական ֆոնի վրա:

Սեղմագիր

Մեդիագրագիտության խնդիրներով զբաղվող ԲՀԿ-ների թիվը՝ **31**

Կշիռը հանրային սեկտորում՝ **1,32%**

Ներգրավվածություն միջին աստիճանը՝

Ըստ մարդկային ռեսուրսների – **43%**

Ըստ ֆինանսական ռեսուրսների – **37%**

Ներգրավված մասնագետների թիվը – շուրջ **100**

Խնդրի լուծմանն ուղղվող տարեկան համախառն բյուջեն – շուրջ **\$ 800 000**

Արդյունավետության միջին ինքնագնահատականը - **6.4/10**

Ընդհանուր ջանքի արդյունավետության միջին ինքնագնահատականը **4.9/10**

Չանրության մեդիագրագիտության աստիճանի ընկալման ինդեքսը **3.8/10**

Իրականացված ծրագրերը՝ **31**

Առաջնային շահառուների թիվը – շուրջ **2000**

Ամփոփում.խնդիրների հասցեագրում

Միջոցների աղբյուրների դիվերսիֆիկացիա

Նկարագրված բոլոր դժվարություններով հանդերձ հանրության մեդիագրագիտության աստիճանի բարձրացման հարցում ԶՅԿ-ների դերը բացառիկ է, և խնդիրն արձանագրված ձեռքբերումները մասշտաբավորելն է: Առաջնային մարտահարվերը մեդիագրագիտության բարձրացմանն ուղղված միջոցների աղբյուրների դիվերսիֆիկացումն է: Ինչպես արդեն նշվեց, մեդիագրագիտության հետ կապված ծրագրերի ֆինանսավորումը լիովին արտաքին է, և չկա որևէ գործոն, որ կվկայեր այդ ֆինանսավորման ծավալների շեշտակի աճի հնարավորության մասին: Ուստի հարկավոր է կենտրոնանալ այլընտրանքային աղբյուրների որոնման վրա: Այդ աղբյուրները տեսականորեն 3-ն են՝ մասնավոր բիզնես, պետական միջոցներ և անհատ քաղաքացիների միջոցներ:

Մասնավոր բիզնես. Վերջին տասնամյակում հայկական մասնավոր սեկտորում զգալի զարգացում է ապրել կորպորատիվ պատասխանատվության մշակույթը, որի շրջանակում մասնավոր ընկերությունները՝ հատկապես խոշորները, մասնակցում են հանրային նշանակության խնդիրների լուծմանը: Մեդիագրագիտության բարձրացման խնդիրը հենց այդպիսիներից է, և անհրաժեշտ է մասնավոր սեկտորի հետ փոխգործակցության ձևաչափեր մշակել: ԶՅԿ-ների և բիզնեսի շահերի և պատկերացումների տարբերությունը սկզբունքորեն հաղթահարելի է, սակայն պահանջելու է ԶՅԿ-ների կողմից մոտեցումների որոշակի վերանայում:

Որպես առաջին քայլ հարկավոր է փորձել հարաբերություններ կառուցել մասնավոր սեկտորի իսկ նախաձեռնությամբ ստեղծված ԶՅԿ-ների հետ՝ բիզնեսասոցիացիաների, միությունների և գործարարների ակումբների հետ, որոնցից շատերն ակտիվ են և իրենց հիմնադիրների շահերն առաջխաղացելու համար նոր ուղղությունների և հնարավորությունների փնտրտուքի մեջ: Երկխոսությունն այդ կազմակերպությունների հետ վստահորեն առավել համապարփակ պատկերացում կտար մասնավոր ընկերությունների շահերի մասին և ընդհանուր հետաքրքրությունների շրջանակ կուրվագծեր:

Այդպիսի կառույցներից ամենաակտիվներն ու համագործակցության հակվածները , թերևս, բանկային, ապահովագրական ու առաջատար տեխնոլոգիաների ոլորտները ներկայացնող բիզնեսասոցիացիաներն են, օտարերկրյա ներդրողներին միավորող առևտրային պալատները և գործարարների ակումբները:

Պետական միջոցներ. Որպես այդպիսին հանրության մեդիագրագիտության բարձրացման խնդիրը նախ և առաջ պետության խնդիրն է: Սակայն վերջինս մասնակցության ակնհայտորեն անբավարար աստիճան է ցուցաբերում: Հետագույն շրջանակում քարտեզագրված մեդիագրագիտության բարձրացմանն ուղղված գրեթե բոլոր ծրագրերը բովանդակային առումով

պետական այս կամ այն գերատեսչության ծիրում են, և տրամաբանական կլիներ, եթե պետությունը հանդես գար իբրև համաֆինանսավորող:

Իրենց ծրագրերի իրականացման համար հանրային միջոցներ ներգրավելու նպատակով մեդիագրագիտության խնդիրներով զբաղվող ԶՅԿ-ները պետք է շեշտակիորեն բարձրացնեն ադվոկացիայի և լոբբիզի իրենց կարողությունները: Կան բազմաթիվ դրական օրինակներ, երբ հասարակական սեկտորը ներկայացնող կառույցներ կարողանում են իրենց կանոնադրական նպատակների իրացման համար պետական միջոցներ ներգրավել: Այս առումով օրինակելի է ԱՏՁՄ (UITE) աշխատանքը, որը տեխնոլոգիական ոլորտի ընկերությունների շահերի առաջխաղացման շրջանակում ձևավորել է պետական մարմինների հետ փոխգործակցության արդյունավետ հարթակներ, որոնց միջոցով առանձին ծրագրերի համար մատչում է ստացել հանրային միջոցներին:

Ադվոկացիոն կարողություններն ընդլայնելու համատեքստում առաջնահերթորեն պետք է ուսումնասիրվի առկա դրական փորձը:

Անհատ քաղաքացիների միջոցներ. Վերջին հետազոտությունների համաձայն՝ զանգվածային լսարանի շուրջ մեկ հինգերորդը պատրաստ է վճարել որակյալ մեդիաբովանդակության համար, ինչը լուրջ հնարավորություն է մեդիագրագիտության ծրագրերի գեղարվեստաստեղծագործական բաղադրիչի և փաստերի ստուգման հարթակների մոնետիզացիայի համար: Մեդիաշուկայի ներկայիս կոնյուկտուրան թույլ է տալիս ԶՅԿ-ներին դիրքավորվել և ամրանալ վճարովի որակյալ մեդիածառայությունների սեգմենտում, ինչը կարևոր քայլ կլիներ միջոցների աղբյուրների դիվերսիֆիկացման ուղղությամբ:

Վերջին տասնամյակում հանրային խնդիրների լուծմանն ուղղված բազմաթիվ ծրագրեր իրականացվել են անհատ նվիրատուների միջոցներով: Լայնորեն զարգանում է «քրաուդֆանդինգի» և «քրաուդսորսինգի» մշակույթը: Թեև ԶՅԿ-ների կողմից մեդիագրագիտությանն ուղղված ծրագրերի ճնշող մեծամասնությունը ընդհանուր առմամբ «քրաուդֆանդինգային» ներուժ չունի, կա առնվազն մի ուղղություն, որը կարող է անհատների միջոցներ ներգրավել: Խոսքը երեխաներին՝ աշակերտներին և նախակրթարանների սաներին ուղղված ծրագրերի մասին է:

Կան բազմաթիվ հաջողված օրինակներ, երբ նշված թիրախային խմբերի համար ծրագրեր են իրականացվել հենց քրաուդֆանդինգի միջոցով: Եվ այդ փորձն առնվազն արժանի է ուսումնասիրման: Երկրում գործում են մի շարք մասնագիտացված քրաուդֆանդինգային հարթակներ, որոնք կարելի է փորձել ներգրավել մեդիագրագիտության բարձրացմանն ուղղված խնդիրներին:

Ներառականություն և կամավորություն

Մեդիագրագիտության «Էկոհամակարգը» ակնհայտորեն ընդլայնվելու կարիք ունի: Այդ մասին նշում են նաև ուսումնասիրությանը մասնակցած ԶՀԿ-ների ներկայացուցիչները: Ինչպես արդեն նշվել է հետազոտության համապատասխան բաժնում, համախառն արդյունավետությունը Էականորեն կբարձրանար, եթե հնարավոր լիներ խնդրին հաղորդակից դարձնել ուսուցչական, ռազմամարզական և բարձրտեխնոլոգիական համայնքները:

Այս առումով առաջնահերթ հետաքրքրություն են ներկայացնում կրթական բաղադրիչ ունեցող այն նախաձեռնությունները, որոնք ունեն նաև ճյուղավորված համայնքակենտրոն ենթակառուցվածք, ինչպիսիք են օրինակ «Արմաթ» ինժեներական լաբորատորիաները, որոնք համապատասխան նպատակադրման պայմաններում կարող են ստանձնել իրենց համայնքների թվային անվտանգության առաջամարտիկի դերը: Ներկայում այդ լաբորատորիաների թիվը 600-ն է, և դրանք հասանելի են Հայաստանի գյուղերի առնվազն կեսում:

Ճիշտ նույն դերը կարող են ստանձնել մարզային «TUMO» կենտրոնները, որոնց կթական ծրագրերը առավել քան համատեղելի են մեդիագրագիտության բարձրացմանն ուղղված ծրագրերի հետ: Արդյունավետ կլիներ նաև «Դասավանդիր Հայաստան» և «Մարզերի երեխաները մարզերում» նախաձեռնությունների ներուժը մեդիագրագիտության խնդիրների շուրջ կենտրոնացնելը: Այդ կառույցների հետ համագործակցության ձևաչափերի ներդրումը կտար արագ արդյունքներ դրանց գործունեության ծածկույթի, ցանցայինության, ճկունության և դինամիզմի հաշվին:

Առանձին ուղղություն է կարող է լինել համագործակցությունը ռազմամարզական կառույցների հետ, որոնք մեդիագրագիտության խնդիրը դիտարկում են տեղեկատվական անվտանգության և հանրության դիմակայունության բարձրացման տեսանկյունից: Այդ կառույցների մեծամասնությունը տիրապետում է շոշափելի կամավորական ռեսուրսի, որն առանձնանում է զինվորականին մոտ կարգապահությամբ և մոտիվացվածությամբ: Առանձին կազմկերպությունների կազմում գործում են լրատվամիջոցներ, ազդարարման տելագրամյան խմբեր, ֆեյսբուքյան ազդեցիկ էջեր և մեդիաարտադրությամբ զբաղվող ստորաբաժանումներ:

Այդ կառույցների մեծամասնությունը կոնսոլիդացվա է Անվտանգային և Ռազմամարզական Ոլորտի Ներկայացուցիչների Միավորման և Համապարփակ Պաշտպանության և Անվտանգության Համակարգի հարթակի շուրջ:

Օրենսդրություն և կարգավորումներ

Մեդիադաշտը կարգավորող օրենսդրության մեջ «մեդիագրագիտություն» եզրույթը հիշատակվում է միայն մեկ անգամ՝ Տեսալսողական մեդիայի մասին օրենքում՝ հանրային հեռարձակողների նպատակները նկարագրելիս, հետևյալ ձևակերպմամբ. «Հանրային հեռարձակողները պարտավոր են սպառողներին մատուցել հաղորդումներ, որոնք ուղղված են բնակչության իրավագիտակցության, սոցիալական պատասխանատվության և **մեդիագրագիտության** բարձրացմանը, հասարակական-քաղաքական, միջազգային իրադարձությունների մասին բնակչությանը համալիր տեղեկատվության տրամադրմանը, Հայաստանի Հանրապետությունում աղետների կառավարմանը և նվազեցմանը»:

Գործող օրենսդրությունը չի ենթադրում հանրայինների կողմից առանձին հաշվետվություն մեդիագրագիտության բարձրացմանն ուղղված ծրագրերի ծավալի և բնույթի վերաբերյալ, ինչի հետևանքով խնդիրը դուրս է մնում հանրային վերահսկողության տիրույթից:

Հանրային հեռարձակողներին հանրության մեդիագրագիտության խնդիրներին առավել հաղորդակից կդարձնեն օրենսդրական այնպիսի փոփոխությունը, որը կսահմաներ մեդիագրագիտությանը նվիրված ծրագրերի ծավալի նվազագույն շեմ և կպարտադրեր կատարողականի վերաբերյալ առանձին հաշվետվության հրապարակում:

Հանրության մեդիագրագիտության աստիճանի բարձացմանը, անշուշտ կնպաստեր նաև մասնավոր հեռարձակողներին խնդրին հաղորդակից դարձնելը՝ մեդիագրագիտությանը նվիրված ծրագրերի արտադրությունը և հեռարձակումն արտոնագրային պահանջի ձևաչափով սահմանելու միջոցով: Որպես առաջնային արդյունք շեշտակիորեն կավելանար մեդիագրագիտության թեմատիկային նվիրված հեռուստա և ռադիո հաղորդումների ծավալը՝ նաև համացանցում տարածվելու հեռանկարով:

Այդպիսի կարգավորման երկրորդային արդյունքը հեռարձակող ընկերությունների և ԶՀ-ների միջև համագործակցության ծավալների անխուսափելի աճն է, ինչը կբարձրացնի ԶՀ-ների աշխատանքի տեսանելիությունը, ինչպես նաև ԶՀ-ների համար կստեղծեր հեռարձակողների պատվերով այդպիսի ծրագրեր արտադրելու, հետևաբար՝ հասույթը դիվերսիֆիկացնելու լրացուցիչ հնարավորություն:

Կարգավորումների դաշտում պետության հետ համագործակցելու իմաստով ԶՀ-սեկտորի վերջին շրջանի ամենամեծ ձեռքբերումը, թերևս, «Ապատեղեկատվության դեմ պայքարի հայեցակարգի» մշակումն ու ներդրումն է: Այն մշակվել է ԶՀ մասնագետների կողմից և գործադրվել ՀՀ վարչապետի N 1319 - Լ որոշմամբ:

Ապատեղեկատվության դեմ պայքարի 2024-2026 թվականների հայեցակարգը և դրանից բխող գործողությունների ծրագիրը վերջին տասնամյակներում ընդունված ամենաբովանդակային և

համապարփակ փաստաթղթերից է, սակայն այն հեղինակած մասնագետները հայեցակարգի գործադրման որակի հետ կապված խնդիրներ են արձանագրում, մինչդեռ հայեցակարգում ամրագրված դրույթների պատշաճ իրագործումը պետության կողմից շեշտակիորեն կբարելավեր առկա իրավիճակը:

Այս համատեքստում ԲՀԿ-ների և շահագրգիռ այլ դերակատարների հիմնական խնդիրը պետության կողմից ընդունված հայեցակարգի լիարժեք գործադրմանը հասնելն է, ինչը ըստ ամենայնիսի անհնար կլինի առանց գործընթացը մշտադիտարկող և հրապարակային զեկույցներով հանդես եկող մասնագիտացված կառույցի գործարկման:

Ընդհանրապես փորձը ցույց է տալիս, որ պետական մարմիններին բնորոշ իներտությունն անհնար է հաղթահարել առանց շահագրգիռ դերակատարների անշեղ և հետևողական ջանքերի:

2021-2024 թվականներին մեդիագրագիտության խնդիրներով զբաղված ՔՀԿ-ների ցանկ

1. Աշխատանք և Հայրենիք ՀԿ (Վայք)
2. Արմավիրի զարգացման կենտրոն
3. Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ
4. Բոլորը հանուն հավասար իրավունքների
5. :Բուն գիտամշակութային հիմնադրամ
6. Գյումրու Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն
7. Գորիսի Մամուլի ակումբ
8. Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակ
9. Եվրասիա Համագործակցության թյան հիմնադրամ
10. Երեխայի և ընտանիքի զարգացման կենտրոն ՀԿ (Հրազդան)
11. Երևանի մամուլի ակումբ
12. Ինտերնյուս
13. Ինֆորմացիոն կոմիտե
14. Իջևան ինֆոտուն
15. Իրազեկ քաղաքացիների միավորում
16. Լյուպին հ/կ (Թալին)
17. Լրագրողներ հանուն ապագայի
18. Հայկական բարեգործական ընդհանուր միություն (ՀԲԸՄ)
19. Հանրային լրագրության ակումբ
20. Հանուն Հավասար իրավունքների հ/կ
21. Հետաքննող լրագրողներ
22. ՀԿ կենտրոն (Վանաձոր)
23. Մարտունու կանանց համայնքային խորհուրդ
24. Մեդիա նախաձեռնությունների կենտրոն
25. Սախարովի անվան մարդու իրավունքների ՀԿ Շիրակի մասնաճյուղ (Գյումրի)
26. Սիվիլիթաս Հիմնադրամ
27. Վորլդ Վիժն Հայաստան
28. Տեղեկատվության ազատության կենտրոն
29. «Քայլ առ քայլ» հիմնադրամ
30. Զոլսոն Երիտասարդական կենտրոն ՀԿ (Արարատ)
31. Chemonics International

2021-2024 թվականներին իրականացված մեդիագրագիտությանն առնչվող ծրագրերի ցանկ

Ծրագիր	Շահառուներ	Իրագործող	Ժամկետ	Ֆինանսավորում
<p>«Թվային աջակցություն հարթակ». Ծրագրի շրջանակում 24/7 ռեժիմով տրամադրվում էր խորհրդատվություն, SS անվտանգության ռիսկերի գնահատում: Անցկացվում էին համապատասխան դասընթացներ:</p>	<p>ԶԶԿ-ներ ՉԼՄ-ներ</p>	<p>Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ</p>	<p>2022-2023</p>	<p>Մեդիա Նախաձեռնությունների կենտրոն</p>
<p>«Թվային սպառնալիքների լաբորատորիա». Ծրագրի շրջանակում իրականացվում էր տարբեր տիպի կիբեռնասպառնալիքների վերլուծություն, հարձակման ցուցիչների հավաքագրում և ըստ անհրաժեշտության՝ անալիզի կերպով այդ տվյալների հրապարակում՝ ապագայում նույնատիպ սպառնալիքների դեմ արդյունավետ հակազդեցության մեխանիզմներ ստեղծելու նպատակով:</p>	<p>ԶԶԿ-ներ ՉԼՄ-ներ Մասնավոր սեկտոր Չանգվածային լաբորան</p>	<p>Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ</p>	<p>2022</p>	<p>Ford Foundation</p>
<p>«Ապատեղեկատվության վիրուսի դեմ պայքար». Ծրագրի, շրջանակներում մշակվել է Փաստերի ստուգման մասին դասավանդման ուղեցույց և ներդրվել են կրթական ծրագրեր հայաստանի 3 բուհերում և 2 դպրոցներում, ստեղծվել են փաստերի ստուգման կրթական լաբորատորիաներ: Ստեղծվել ու տարածվել է 10 տեսաֆիլմից բաղկացած շարք, որ նպատակ ունի նպաստել մեդիագրագիտության տարածմանը և պայքարել ապատեղեկատվության դեմ:</p>	<p>Ուսուցանողներ Ուսանողներ Աշակերտներ Չանգվածային լաբորան</p>	<p>Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ</p> <p>Տեղեկատվության ազատության կենտրոն</p>	<p>2020-2021</p>	<p>ԱՄՆ Դեսպալատում</p>
<p>«Ռազմավարական հաղորդակցության աջակցության ծրագիր». Աջակցում է Հայաստանի կառավարությանը՝ ստեղծելու արդյունավետ, պարզեցված, տվյալների վրա հիմնված և քաղաքացիակենտրոն ռազմավարական հաղորդակցության համակարգեր:</p>	<p>ՀՀ պետական սեկտոր</p>	<p>Chemonics International</p> <p>Տեղեկատվության ազատության կենտրոն</p>	<p>2024-ից</p>	<p>ԱՄՆԾԳ</p>
<p>«Ապատեղեկատվության ֆայերվոլ». Ծրագրի նպատակն էր ամրապնդել տարածաշրջանային համագործակցությունը՝ հեշտացնելով լավագույն փորձի փոխանակումը հակաբևեռային ապատեղեկատվությանը հակազդելու հարցում հետաքրքրված Հայաստանի, Վրաստանի և Մոլդովայի ԶԶԿ-ներին միջև: Նրանց համար ստեղծվել կարողությունների զարգացման ուսուցման մոդուլ և ապատեղեկատվության դեմ պայքարի ֆայրեվոլ տարածաշրջանային համայնք ձևավորել:</p>	<p>ԶԶԿ սեկտոր</p>	<p>Ռազմավարական հաղորդակցության և կենտրոն (Վրաստան)</p> <p>Տեղեկատվության ազատության կենտրոն</p>	<p>2023</p>	
<p>«ԶԶԿ-ների և ՏԻՄ-երի ապատեղեկատվության դիմադրողականության ձևավորում». Ծրագիրն ուղղված էր ԶԶԿ և ՏԻՄ ներկայացուցիչների մեդիագրագիտության և փաստերի ստուգման գիտելիքների խորացմանը և նպատակ ուներ ամրապնդելու նրանց միջև համագործակցությունը:</p>	<p>ԶԶԿ սեկտոր ՏԻՄ սեկտոր</p>	<p>Հանրային լրագրության ակումբ</p> <p>Տեղեկատվության ազատության կենտրոն</p>	<p>2021-2022</p>	<p>ԱՄՆ դեսպանություն</p>
<p>«Ապատեղեկատվության դեմ պայքար մասնավոր հատվածում». Ծրագրի խնդիրն էր ամրապնդել տեղական մասնավոր հատվածի ներգրավվածությունը ապատեղեկատվության դեմ պայքարում՝ դասընթացների և թեմանտիկ մեդիաարտադրության միջոցով:</p>	<p>Մասնավոր սեկտոր</p>	<p>Տեղեկատվության ազատության կենտրոն</p>	<p>2021-2022</p>	<p>CIPE</p>
<p>«Փաստերի ստուգման լաբորատորիաներ դպրոցներում և բուհերում» Ծրագրի նպատակն էր մոբիլիզացնել և ներգրավել երիտասարդներին ապատեղեկատվության դեմ պայքարի գործընթացում՝ հզորացնելով երիտասարդների մեդիագրագիտության և փաստերի ստուգման կարողությունները:</p>	<p>Ուսանողներ Աշակերտներ</p>	<p>Տեղեկատվության ազատության կենտրոն</p>	<p>2021-2022</p>	<p>Ֆրանսիայի Դեսպանություն</p>

<p>«Մեդիա գրագիտություն և փաստերի ստուգման կարողությունների զարգացում ՀՀ պետական կառավարման մարմինների և Ազգային ժողովի պաշտոնյաների համար» Ծրագրի շրջանակներում պետական կառավարման մարմինների և ԱԺ պաշտոնյաների համար կազմակերպվել են մեդիագրագիտության և փաստերի ստուգման բազային գիտելիքների խորացմանն ուղղված դասընթացներ:</p>	<p>ՀՀ պետական սեկտոր</p>	<p>Տեղեկատվության ազատության կենտրոն</p>	<p>2021</p>	<p>IRI</p>
<p>«ԻնֆոՏոն», Ծրագրի նպատակն էր Հայաստանի մարզերում հիմնել Ինֆոտոներ, որոնք պետք է խթանեն մեդիագրագիտությունը և նոր մեդիայի օգտագործումը: Ինֆոտոների ցանցը տեղակայված է Հայաստանի 10 քաղաքներում՝ Արարատում, Արմավիրում, Գորիսում, Իջևանում, Մարտունիում, Վանաձորում, Վայքում, Գյումրիում, Հրազդանում և Թալինում: Ինֆոտոները տեղեկատվական կենտրոններ են, որոնք բարձրացնում են տեղական համայնքային խնդիրներ:</p>	<p>Երիտասարդներ, Համայնքների բնակիչներ</p>	<p>Եվրասիա Համագործակցության հիմնադրամ Արմավիրի զարգացման կենտրոն Սախարովի անվան մարդու իրավունքների ՀԿ Շիրակի մասնաճյուղ (Գյումրի) Գորիսի Մամուլի ակումբ ՀԿ կենտրոն (Վանաձոր) Իջևան Ինֆոտոն հ/կ Աշխատանք և Հայրենիք ՀԿ (Վայք) Երեխայի և ընտանիքի զարգացման կենտրոն ՀԿ (Հրազդան) Մարտունու կանանց համայնքային խորհուրդ Զուսու երիտասարդական կենտրոն ՀԿ (Արարատ) Լյուսին հ/կ (Թալին)</p>	<p>2011-2023</p>	<p>ԱՄՆՄԶԳ</p>
<p>«Մեդիայի որակի և դիմակայունության նախաձեռնություն» ծավալուն ծրագիրը ներառում է նաև մեդիագրագիտության բարձրացմանն ուղղված ջանքեր՝ փաստերի ստուգման լրագրության զարգացում, համապատասխան բովանդակության պատրաստման խթանում, ՉԼՄ-ների էթիկայի դիտորդ մարմնի հզորացում, լրատվամիջոցների բովանդակության վերլուծություն, մեդիագրագիտության թեմայով հրապարակումներ և միջոցառումների անցկացում:</p>	<p>ՉԼՄ-ներկայացուցիչներ, Չանգվածային լսարան</p>	<p>Մեդիա նախաձեռնությունների կենտրոն Երևանի մամուլի ակումբ Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ IMS</p>	<p>2024-2027</p>	<p>ԵՄ, ԱՄՆՄԶԳ</p>
<p>«Հայաստանի մեդիայի զարգացման ծրագիր». Մեդիագրագիտությանը վերաբերող բաղադրիչներ պարունակող բազմաֆունկցիոնալ ծրագիր է, որն առաջարկում է մեդիագրագիտության նորարարական</p>	<p>ՉԼՄ-ներկայացուցիչներ, Դասավանդողներ,</p>	<p>Ինտերնյուս</p>	<p>2023-2028</p>	<p>ԱՄՆՄԶԳ</p>

<p>շտեմարաններ տարբեր խմբերի համար, մեդիագրագիտության վերապատրաստման ծրագրեր և ուսուցում դասավանդողների համար, մեդիագրագիտության հանրահռչակման ամենամյա շաբաթ: Ծրագիրը համագործակցում է Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ՝ հանրակրթության նոր չափորոշիչին համապատասխան խթանելու մեդիագրագիտության ֆորմալ ուսուցումը, պատրաստում և տրամադրում է նոր ռեսուրսներ, որոնք կօգնեն մարդկանց ավելի լավ հասկանալ ու սպառել մեդիան: Ծրագիրը նպաստում է նաև մեդիա քննադատության ժանրի զարգացմանը՝ քննարկումներ նախաձեռնելով մեդիա ոլորտի և որակյալ լրագրության մասին: Աջակցություն է տրամադրվում փաստերի ստուգման ուղղությամբ աշխատող խմբագրություններին՝ ապատեղեկատվության դեմ պայքարելու համար:</p>	<p>Պետական մարմինների աշխատակիցներ</p>	<p>Մեդիա նախաձեռնությունների կենտրոն</p>		
<p>«Երիտասարդները գործելիս. Հայաստանում երիտասարդների գործեղացման և առաջնորդության խթանում» ծրագիրը պարունակում է «Մեդիագրագիտություն և քննադատական մտածողություն» բաղադրիչ, որը նախատեսում է մեդիագրագիտության շտեմարանի ստեղծում. առձեռն ու առցանց գործիքակազմ անդիո-վիդեոալ բաղադրիչներով, մեդիագրագիտության դպրոց, որի շրջանակում կտրամադրվեն նաև դրամաշնորհներ, Փաստերի ստուգման դպրոց (դրամաշնորհների տրամադրմամբ) «Ես եմ մեդիան» թվային ինֆլուենսերների դպրոց (դրամաշնորհներ տրամադրմամբ) Հեռուստատեսային հաղորդումների շաբթ, Մեդիագրագիտության շաբաթ (յուրաքանչյուր տարի)</p>	<p>ՉԼՄ-ներկայացուցիչներ, Երիտասարդներ, Դասավանդողներ, Չանգվազային լսարան</p>	<p>Մեդիա նախաձեռնությունների կենտրոն</p>	<p>2023-2026</p>	<p>ԵՄ, Կոնրադ Ադենաուեր հիմնադրամ</p>
<p>«Մեդիագրագիտությունը հանրության համար» ծրագրի նպատակն էր լայն հասարակության կողմից մեդիայի քննադատական, կոմպետենտ և ակտիվ սպառմանը նպաստելը՝ փառատոների/վեբինարների և տեղեկատվական արշավի միջոցով՝ «Դիմակահանդես լրավարակի ժամանակ» առցանց փառատոնի և «ԴԻՄԱԿայում ենք» շաբթը, որոնք դասընթացների, դիտումների ու քննարկումների օգնությամբ հանրությանը լրատվությունը հասկանալու, կեղծն ու հավաստին տարբերելու, մանիպուլյացիաներից ու պրոպագանդայից խուսափելու, որակյալ լրագրությունը գնահատելու վերաբերյալ հմտություններ և տեղեկություններ են փոխանցել: Մեդիագրագիտության արշավի միջոցով ՄՆԿ-ն իր սոցիալական ցանցերի էջերում տարածում է օգտակար կյոթեր ու խորհուրդներ լրատվական վարակներից խուսափելու և մեդիա գործիքները ճիշտ կիրառելու մասին:</p>	<p>Չանգվածային լսարան</p>	<p>ո-ost (Արևելյան Եվրոպայի մասին լուսաբանման ցանց)</p> <p>Մեդիա նախաձեռնությունների կենտրոն</p>	<p>2020-2021</p>	<p>Գերմանիայի Տնտեսական համագործակցության և զարգացման նախարարություն</p>
<p>«Մեդիագրագետ եւ պաշտպանված համայնքներ». Ծրագրի նպատակն է բարձրացնել Հայաստանի համայնքներում մեդիագրագիտության աստիճանը և ուժեղացնել ապատեղեկատվության դեմ հանրության դիմակայունությունը՝ համայնքների դպրոցներում Մեդիա և տեղեկատվական գրագիտության դասարան-ակումբներ հիմնելու, Մեդիագրագիտության աշակերտական ճամբարներ, փառատոններ և մրցույթներ կազմակերպելով:</p>	<p>Ուսուցիչներ, Աշակերտներ</p>	<p>Հանուն Հավասար իրավունքների հ/կ</p>	<p>2023-ից</p>	<p>DDF, Freedom house, The Sigrid Rausing Trust, ԱՄՆ Պետքարտուղարության Հանրային դիվանագիտության գրասենյակ, Friedrich Naumann Foundation</p>

<p>«Ղեռահասաների կարողությունների զարգացում, վերականգնում և ներառում» ծրագրի նպատակն է աջակցել բռնի տեղահանված արցախցի ղեռահասաներին ինտեգրվել եւ վերականգնվել՝ կարողությունների զարգացման դասընթացների, կրթական ինտելեկտուալ խաղերի եւ արտ թերապիայի միջոցով: Ծրագիրն ունի մեդիագրագիտության ուսուցման բաղադրիչ:</p>	<p>Արցախից բռնի տեղահանված ղեռահասաներ</p>	<p>Հանուն Հավասար իրավունքների հ/կ</p>	<p>2024-ից</p>	<p>Չեխիայի Դեսպանություն</p>
<p>«YouthON Մարդու իրավունքների և քաղաքացիական կրթության ճամբար» ծրագրի նպատակն է զարգացնել մարզերում ապրող երիտասարդների կարողությունները: Ծրագիրը ենթադրում է նաև մեդիագրագիտության ուսուցման բաղադրիչ:</p>	<p>Մարզերի համայնքների դպրոցականներ</p>	<p>Հանուն Հավասար իրավունքների հ/կ</p>	<p>2019-2022</p>	<p>Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, EED, THE SIGRID RAUSING TRUST</p>
<p>«Մեդիա և տեղեկատվական գրագիտության արքեպիսկոպոս» Ծրագրի նպատակն էր նպաստել Հայաստանում ապատեղեկատվությանը դիմակայուն հասարակության ձևավորմանը՝ քաղհասարակության, մեդիայի ներկայացուցիչների կարողությունների զարգացման, հանրային, մասնավոր և պետական ոլորտների միջև կայուն համագործակցության խթանման, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ կրթության ու մեդիա ոլորտների կարիքներին արձագանքող հարթակների մշակման, մարզաբնակ երիտասարդների՝ փաստերի ստուգման ու ապատեղեկատվությունը, մանիպուլյացիան և քարոզչությունը ճանաչելուն ուղղված կարողությունների զարգացման միջամտությունների միջոցով:</p>	<p>Մարզերի համայնքների դպրոցականներ ՉԼԱ- ներկայացուցիչներ, ԶՀԿ- ներկայացուցիչներ</p>	<p>Հանրային լրագրության ակումբ</p>	<p>2021-2023</p>	<p>ԱՄՆ պետքարտուղարության Հանրային դիվանագիտության գրասենյակ</p>
<p>«Մեդիա և տեղեկատվական գրագիտությունը նախադպրոցական կրթության մեջ» Ծրագրի նպատակն էր հայ մանկավարժներին ավելի լավ գինել մեդիա և տեղեկատվական գրագիտության գիտելիքներով և հմտություններով, բարձրացնել նրանց թվային անվտանգության կարողությունները, օգնել նրանց առավել լավ հասկանալու անձնական տվյալների պաշտպանության կարևորությունը, ձեռք բերելու ծրագրի շրջանակում մշակված մեդիա և տեղեկատվական գրագիտության ռեսուրսներ և կրթական պլաններ, որոնք պետք է ներմուծվեն նախադպրոցական կրթական համակարգ: Ծրագրի վերջնական նպատակն էր հասնել Հայաստանում մեդիագրագետ մանկավարժների ընդլայնմանը՝ բազմապատկելով նրանց գիտելիքներն ու հմտությունները իրենց գործընկերների և նախադպրոցական համակարգի սաների շրջանում՝ ապատեղեկատվությանը դիմակայուն հասարակություն կառուցելու համար:</p>	<p>Նախակրթարանների աշխատակիցներ, սաներ</p>	<p>Հանրային լրագրության ակումբ</p>	<p>2022-2023</p>	<p>ԱՄՆ Պետքարտուղարություն</p>
<p>«Մարզային ԶՀԿ-ներն ընդդեմ ապատեղեկատվության» . Ծրագրի նպատակն էր մարզերում գործող ԶՀԿ-ների կարողությունների զարգացմանը՝ ապատեղեկատվության դեմ պայքարի և փաստերի ստուգման գործընթացում, ինչի արդյունքում ԶՀԿ-ները կեղծ լուրերի և ապատեղեկատվության դեմ պայքարը կսկսեն կիրառել իրենց գործունեության մեջ:</p>	<p>Մարզերի ԶՀԿ- ներկայացուցիչներ</p>	<p>Հանրային լրագրության ակումբ</p>	<p>2021</p>	<p>Լիտվայի դեսպանություն</p>
<p>«Մեծահասակների հզորացում մեդիագրագիտությամբ». Ծրագրի նպատակն էր նվազագույնի հասցնել ապատեղեկատվության պատճառած վնասը մեծահասակների շրջանում՝ մեդիակրթության, իրազեկվածության բարձրացման և կարողությունների զարգացման միջոցով: Ծրագիրը նպաստել է մարզերի մեծահասակների մեդիագրագիտության բարձրացմանը: Ծրագիրը ենթադրում էր դասընթացներ,</p>	<p>Մարզերի մեծահասակ բնակիչներ</p>	<p>Հանրային լրագրության ակումբ</p> <p>Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակ</p>	<p>2021</p>	<p>Գերմանիայի Արտաքին գործերի նախարարություն</p>

<p>հատուկ միջոցառում-քննարկումներ, կրեատիվ խաղեր և մեդիաբովանդակության արտադրություն:</p>				
<p>«Հայաստանի երիտասարդների հզորացում» Ծրագրի նպատակն էր աջակցել Հայաստանի մարզերի երիտասարդներին պայքարելու ապատեղեկատվության և կեղծ լուրերի դեմ, խթանել երիտասարդների հետաքրքրությունը մեդիագրագիտության և փաստերի ստուգման նկատմամբ, ինչպես նաև նպաստել սոցիալական հարթակներում ստուգված տեղեկության տարածմանը, ստեղծել մեդիագրագետ, նման հայացքներ ունեցող երիտասարդների ցանց և նրանց միավորել ապատեղեկատվության դեմ պայքարի շուրջ: Ծրագրի շահառուներն են մարզերի երիտասարդները: Տեղական և տարածաշրջանային հասարակական կազմակերպությունները: Ծրագրի շրջանակներում Հայաստանի մարզերի երիտասարդների համար կազմակերպվել են դասընթացներ, մրցույթներ, արտադրվել է համապատասխան մեդիաբովանդակություն:</p>	<p>Մարզերի երիտասարդներ, Մարզային ԶՀԿ-ներկայացուցիչներ</p>	<p>Հանրային լրագրության ակումբ «Բոլորը հանուն հավասար իրավունքների»</p>	<p>2021</p>	<p>Բաց Հասարակության հիմնադրամներ</p>
<p>«Ավելի անվտանգ առցանց միջավայր. նախադպրոցական հաստատություններում մեդիագրագիտության ուղղությամբ» Ծրագրի նպատակն էր նպաստել Հայաստանում մեդիագրագիտության և տեղեկատվական գրագիտության մակարդակի բարձրացմանը նախադպրոցական կրթական ոլորտում փոփոխություններ առաջարկելու միջոցով: Ծրագրի ուշադրության կենտրոնում են եղել վաղ տարիքային և նախադպրոցական կրթական ծրագրերը: Ծրագիրը նպաստել է նաև ուսուցիչների և ծնողների հմտությունների զարգացմանը՝ նրանց հնարավորություն տալով նոր ու իրազեկված մոտեցումներ ցուցաբերել ապատեղեկատվությանը և կեղծ լուրերին առևձիգ բարդ մարտահրավերներին: Ծրագիրը ենթադրել է կրթական և օժանդակ նյութերի արտադրության բաղադրիչներ:</p>	<p>Նախակրթարանների աշխատակիցներ, Սաներ, Ծնողական համայնք</p>	<p>Հանրային լրագրության ակումբ</p>	<p>2020-2021</p>	<p>ԱՄՆ Դեսպանություն</p>
<p>«Hack2Check. մեդիա և տեղեկատվական գրագիտության հեքթթոն». Ծրագիրը նպատակ ունի նպաստել նորարարական լուծումների զարգացմանը՝ մեդիա և տեղեկատվական գրագիտության բարելավման ու առցանց քարոզչության կանխարգելման գործում: Ներգրավելով երիտասարդների, ՏՏ ոլորտի մասնագետների, մեդիա աշխատողների և մասնագետների՝ ծրագիրը պետք է բարձրացնի հասարակության տեղեկացվածությունը, վերագինի և ի հայտ բերի արդյունավետ լուծումներ, որոնք կզարգացնեն քննադատական մտածողությունը և դիմադրողականությունը քարոզչությանը:</p>	<p>ՉԼՄ ներկայացուցիչներ ՏՏ մասնագետներ Չանգվածային լսարան</p>	<p>Հանրային լրագրության ակումբ Հայկական բարեգործական ընդհանուր միություն (ՀԲԸՄ)</p>	<p>2023-2024</p>	<p>ԱՄՆ Պետքարտուղարության Հանրային դիվանագիտության գրասենյակ</p>
<p>«Բու՛ն TV». Լսարանի մեդիագրագիտությունն ուղղված մեդիաբովանդակության արտադրություն և տարածում: Գործառույթն իրականացվում է ոչ թե առանձնացված ծրագրի շրջանակում, այլ իբրև ընթացիկ աշխատանքների բաղադրիչ:</p>	<p>Չանգվածային լսարան</p>	<p>:Բուն գիտամշակութային և հիմնադրամ</p>		

<p>«infocom.am»-ը իր հրապարակումներում պարբերաբար անդրադառնում է մեդիագրագիտության խնդիրներին՝ հանրության մեդիագրագիտության բարձրացումը հայտարարելով նաև իբրև կանոնադրական նպատակ: Ծրագրի մասնագետները հաճախ հանդես են գալիս նաև մեդիագրագիտությանը նվիրված դասախոսություններով՝ հատկապես հանրակրթական դպրոցների աշակերտների շրջանում:</p>	<p>Չանգվածային լսարան, դպրոցականներ</p>	<p>Ինֆորմացիոն կոմիտե հ/կ</p>		
<p>«fip.am» - ը փաստերի ստուգման և ապատեղեկատվության դեմ պայքարի հարթակ է:</p>	<p>Չանգվածային լսարան</p>	<p>Իրագել քաղաքացիների միավորում</p>	<p>2016-ից</p>	
<p>«hetq.am» -ի փաստերի ստուգման ծառայություն:</p>	<p>Չանգվածային լսարան</p>	<p>Հետաքննող լրագրողներ</p>	<p>2023-ից</p>	
<p>«Civilnetcheck» -ը civilnet.am-ի փաստերի ստուգման ծառայությունն է:</p>	<p>Չանգվածային լսարան</p>	<p>Սիվիլիթաս Հիմնադրամ</p>	<p>2021-ից</p>	
<p>«ampop.am» փաստահեն լրագրության հանրահռչկամանն ուղղված նախագիծ է, որում ներգրավված մասնագետները պարբերաբար հանդես են գալիս մեդիագրագիտության և տեղեկատվական անվտանգության վերաբերյալ դասընթացներով և հրապարակումներով</p>	<p>Չանգվածային լսարան, ԶՀԿ-ներկայացուցիչներ Մասնավոր սեկտոր</p>	<p>Լրագրողներ հանուն ապագայի</p>	<p>2016-ից</p>	